ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՌԱՋ*

Հայկական պատվիրակության՝ (Պողոս Նուբար, Ա. Ահարանյան) Հաշտության Կոնֆերանսին ներկայացրած հուշագիրը (թարգմանված է հուշագրի ֆրանսերեն բնագրից)**

Օսմանյան կայսրության մեջ ազգագրական հարցերը չեն կարող քննվել և ուսումնասիրվել այն մեթոդներով, որոնք գործածվում են եվրոպական երկրներում: Ասիական Տաճկաստանում ազգային քաղաքական միավորներ ստեղծելու համար ազգությունների սկզբունքը գործադրել ուզելով՝ բացարձակապես անտրամաբանական կլիներ հիմք ընդունել զանազան շրջանների ազգագրական պատկերը: Թուրքիայում կան միայն քաղաքական հարցեր, և տվյալ բոպեին այդ կայսրության որևէ մասի ազգագրական պատկերն ուրիշ բան չէ, եթե ոչ համապատասխան քաղաքական դրության հետևանքը: Արդ, չի կարելի հիմնվել հետևանքի վրա, երբ ուզում ես վերացնել պատճառը: Նախքան Բեռլինի դաշնագրի կնքվելը՝ Հայաստանը, թեև հինգ դար ճնշված, ներկայացնում էր հայկական հոծ ազգաբնակություն, որ կազմում էր բացարձակ մեծամասնություն: Բեռլինի դաշնագրից հետո, որ պետք է երաշխավորեր հայերի կյանքի և ինչքի ապահովությունը, Հայաստանի ազգագրական պատկերն արմատապես փոխվեց բռնությամբ ու կոտորածով:

Բաղդատելով հայոց պատրիարքարանի 1882 և 1912 թվականներին կազմած վիճակագրությունները, գտնում ենք, որ 1882-ին Տաճկաստանում հայերի թիվն է եղել 2600000, որից 1680000-ը վեց վիլայեթներում. մինչ 1912-ին այդ թվերը ընկնում են 1100000-ի և 1018000-ի: Ուստի պարզվում է, որ տաճկահայերի ընդհանուր թիվը պակասում է 500000-ով: Իրականության մեջ, այդ նվազումը հայկական վեց վիլայեթներում եղել է 612000. դա նշանակում է, որ Հայաստանից դուրս տաճկահայերի թիվն ավելացել է 112000-ով: Սա մի ջախջախիչ փաստ է, որ Տաճկաստանում ազգագրական

ՀՐԱՊԱ-
ՐԱԿՈՒՄՆԵՐ

* Տպագրվում է ըստ դարեսկզբին Թիֆլիսում տպագրվող «Աշխատավոր»-ի գրադարան» մատենաշարի հրատարակության («Աշխատավոր»-ի գրադարան, N15, տպ. «Աշխատավոր», Թիֆլիս, 1915):

** Սկիզբը՝ հանդեսի նախորդ համարում (Հայոց ցեղասպանության պատմության և պատրագրության հարցեր, N5, 2002):

հարցն ուրիշ բան չէ, եթե ոչ քաղաքական հարցի սրության աստիճանի հետևանքը. այն փաստը, որ 30 տարվա մեջ (1882-1912) վեց վիլայեթների հայերի թիվը, փոխանակ ավելանալու, պակասել է 662000-ով, մինչ՝ Թուրքիայի այլ մասերում հայերի թիվն ավելացել է 162000-ով, բացատրվում է միայն նրանով, որ Տաճկաստանի այլ մասերում ճնշումը նվազ վայրագ է եղել, քան վեց վիլայեթներում: Անդրադառնալով հայերի ամբողջական թվի նվազումին, կարելի՞ է հավատալ, որ այդ նվազումը եղած լինի 500000: Անտարակույս՝ ոչ. հայերի նման բազմածնունդ մի ցեղ այդ 30 տարվա ժամանակամիջոցում պետք է ավելանար առնվազն 500000 նոր ծնունդով: Դրանից հետևում է, որ այդ 30 տարվա միջոցին թուրքերի կողմից կոտորված հայերի թիվն իրականության մեջ եղել է մի միլիոն՝ հաշվելով, որ բռնության հետևանքով գաղթականության թիվը կհասնի 100000-ի:

Այս պատերազմի ընթացքում կորան ավելի քան մի միլիոն հայեր: Ուրեմն, Բեռլինի դաշնագրից ի վեր, որով պետությունները հանդիսավորապես հանձն առան երեշխավորել հայերի ապահովությունը, ավելի քան երկու միլիոն հայեր են սպանված թուրքերի կողմից: Նույն պետություններն այժմ չեն կարող, հենվելով այնպիսի մի ազգագրության վրա, որի հիմքն է բռնությունը, ժխտել Հայաստանի զուտ հայկական բնույթ ունենալը:

Բայց Թուրքիայում ազգագրական հարցը միայն վերջին քառասուն տարիների ընթացքում չէ, որ եղել է կամայական: Այդ դրությունը տևում է տաճկական կայսրության հիմնադրությունից ի վեր: Թուրքիայի ազգագրական պատկերը, նվաճումից ի վեր, արտացոլել է նրա դարավոր քաղաքականությունը, որ կայացել է հպատակ ցեղերը ջնջելու մեջ: Երբ թուրքերը նվաճեցին իրենց կայսրությունը, իսկական Փոքր-Ասիան պարունակում էր միայն հունական հոծ ազգաբնակություն. այսօր նա պարունակում է թուրքական հոծ ազգաբնակություն՝ ծովեզերքում հունական խառնուրդներով: Ի՞նչ է այդ կերպարանափոխության պատճառը: Պատմությունն ապացուցում է, որ երբ բարբարոս ցեղերը գրավեն մի քաղաքակիրթ երկիր, նրանք կձուլվեն քաղաքակրթությամբ բարձր հպատակ ազգաբնակության մեջ, ինչպես ձուլվեցին ֆրանկները Գաղղիայում, լոմբարդներն Իտալիայում, բուլղարները Բուլղարիայում: Միայն Տաճկաստանն է կազմում այդ պատմական օրենքի բացառությունը, և դա առաջացել է թուրքերի այն քաղաքականությունից, որ կոտորածներից հետո զոհերի կալվածներում բերել ու հաստատել են թուրք ժողովուրդ: Արդարև, Տաճկաստանը միշտ իբր երկրորդ բանակ է գործածել գաղութներ հաստատելու այդ սիստեմը, որ զինվորական նվաճումներն ամրացվել են ազգագրական նվաճումներով. բացի այդ, նա դրանց վրա ավելացրել է և ուրիշ գործակիցներ, ինչպես ենիչերիների բանակի, քրդական համիդիեների ստեղծումը և այլն:

Այս նկատառումները ցույց են տալիս, որ Տաճկաստանում ազգությունների սկզբունքը չի կարող հիմնվել ազգագրական պատկերի վրա, որ նույն այդ սկզբունքի աղաղակող բռնաբարումն է: Սակայն պատերազմն է ստանձնել այդ խնդրին իր իսկական ըմբռնումները տալու գործը: Թուրքական կայսրության այսօրվա ազգագրական պատկերը արմատապես տարբեր է չորս տարի առաջվա պատկերից. ժողովուրդները դարձել են թափառաշրջիկների զանգված: Ազգագրական ո՞ր տվյալների վրա պետք է իրագործել ազգությունների սկզբունքը:

Ակներև է, որ միայն մի լուրջ հիմք կա, որը կարող է նկատի առնվել՝ պատմական իրավունքը, իր բոլոր տարրերով: Ճիշտ այնպես, ինչպես բալ-

կանյան ժողովուրդները կարողացան վերստանալ իրենց անկախությունը, թեև իրենց ազատագրման նախօրյակին գտնվում էին ազգագրական տեսակետով նույն դժվարությունների մեջ, ինչ որ ունի հայ ժողովուրդը. Հայաստանն էլ պետք է կարողանա ձեռք բերել իր անկախությունը՝ իրագործելով «Հայաստանը՝ հայերին» սկզբունքը, որ նվիրագործված է 6 դարի մարտիրոսագրությամբ: Հայաստանի ազգագրական կացությունն ավելի դյուրաբեկ չէ, քան Բուլղարիայի դրությունը 1876 թվականին: Դա որոշ երևում է... վերջում զետեղված երկու վիճակագրություններից, որոնցից մեկը, կազմված 1876-ին Ռուսչուքի հյուպատոս Մ. Օբարեի կողմից և հրատարակված "Bulletin de la Société géographique" հանդեսի 1876թ. օգոստոսի համարում, վերաբերում է Բուլղարիային, իսկ մյուսը վերաբերում է Հայաստանին՝ կազմված 1912թ., Հայոց պատրիարքարանի կողմից:

Կարիք կա հիշելու նաև, որ Հայաստանն իր անկախությունը հայտարարած միջոցին ուներ միայն 3-4 հարյուր հազար հույներ:

* * *

Բայց, այս հիմնական փաստարկություններից դուրս, թուրքերի կողմից Հայաստանում ստեղծված ազգագրական կամայական դրության ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ այսօր էլ, չնայած դարավոր կոտորածներին, Հայաստանում էական տարրն հանդիսանում է հայ ժողովուրդը:

Եթե քննենք Պոլսի հայոց պատրիարքարանի կազմած վիճակագրությունները, ինչպես և հայկական այլ փաստաթղթերը, կտեսնենք, որ ամբողջ Տաճկաստանում հայ ազգաբնակության թիվը պատերազմի նախօրյակին եղել է 2 միլիոնից մի քիչ ավելի, որից 1403000-ը բնակվում էին Հայաստանում (տե՛ս N 2 վիճակագրական տախտակը):

Պատերազմի սկզբին ռուսական պաշտոնական վիճակագրությունների համաձայն, ամբողջ Հարավային Կովկասում ապրող հայերի թիվն եղել է 1804600, որից 1296000-ը՝ իսկական Հայաստանում (տե՛ս N 3 ցուցակը):

Եթե դրա վրա ավելացնենք այլ երկրներում հաստատված հայերի թիվը, այն է՝ 823000, կստանանք, որ պատերազմից առաջ հայերի ընդհանուր թիվն եղել է 4470000 (տե՛ս N 4 ցուցակը):

Այս թվի մոտ 2700000-ը ապրելիս են եղել մայր հայրենիքում և ավելի քան մեկ միլիոնը՝ անմիջական շրջակայքում:

Հայաստանում բնակվող թուրքերի թիվն եղել է 1005000:

Թաթարների թիվը՝ 537000:

Թափառաշրջիկ քրդերի և թուրքմենների թիվը՝ 555000:

Բոլոր մահմեդականները միասին կազմում էին 2308000:

Արդ՝

1. Առանձին վերցրած, հայերը Հայաստանում ազգաբնակության ամբողջության բաղդատմամբ կազմել են հարաբերական մեծամասնություն.

2. Տաճկա-Հայաստանում, առանձին վերցրած, հայերը եղել են մի քիչ պակաս, քան բոլոր մահմեդականները միասին առած.

3. Հայերը զգալիորեն ավելի են եղած ամբողջ մահմեդական բնակչության թվից՝ Տաճկաստանի և Կովկասի հայկական տերրիտորիաները միասին վերցրած.

4. Բոլոր քրիստոնյաների թիվը կազմել է 55 տոկոս, իսկ զանազան դավանությունների թիվը՝ 5 տոկոս:

* * *

Այս պատերազմի հայերից խլած զոհերի թիվը սոսկալի է. այլ ժողովուրդների կորուստները սակավաթիվ դեպքերում են անցնում 10 տոկոսից. մեր զոհերը մի քառորդն են ամբողջ հայության թվի և համարյա կեսը՝ Հայաստանում բնակվող հայերի:

«Այլևս չկա Հայկական հարց: Մենք արդեն վճռեցինք այդ հարցը»,- ասում էր թուրք նախարարը ցինիկ կերպով:

«Անկախ Հայաստա՞ն: Այո՛, լավ կլիներ, բայց դժբախտաբար այլևս հայեր չկան», - կրկնում են մեր հակառակորդները կեղծավորությամբ:

Ընդունել այդ փաստարկությունը՝ կնշանակեր բացասել մարդկային ամեն արդարություն, անպատվել այն միլիոնավոր մարդ արարածներին, որոնք զոհաբերվեցին իրավունքի հաղթանակի համար. դա կնշանակեր նվիրագործել մարդասպանների ոճիրները ու վարձատրել մի ամբողջ ազգ բնաջնջելու թուրքական գարշելի ծրագիրը:

Բայց ճիշտ չէ, բարեբախտաբար, որ հայերը բնաջնջվել են: Չնայած, որ զոհերի թիվը հասնում է մի միլիոնի, չնայած որ վերապրողների մի մասը, փախած կամ տարագրված, կորել է սովամահությունից ու համաճարակներից և մնացածներն ուժասպառվել են անվերջ կռիվներից ու տառապանքներից, ազգի մի մասը վերապրել է և ունի միայն մի հույս, միակ կամք՝ վառել մարած օջախը, վերաշինել ավերված տունը, վերսկսել աշխատանքը՝ այս անգամ իրեն համար, իր ազատ ու անկախ հայրենիքում:

Այն երեք ու կես միլիոնից, որ այսօր ներկայացնում ենք մենք, մեկ ու կես միլիոնը գտնվում է հայրենի հողի վրա. վաղն այս թիվը դյուրությամբ կարող է հասնել երկու ու կես միլիոնի: Կովկասում, Ռուսաստանում, Պոլսում, Եվրոպայում, Եգիպտոսում, Ամերիկայում, Բալկաններում և ամեն տեղ անհամբեր սպասում են մայր հայրենիք վերադառնալու ժամին և ամենքը, հույսի սարսուռով համակված, պատրաստվում են վերադարձի:

* * *

Ինչ վերաբերում է մահմեդականներին, նրանց թիվն էլ պակասել է Հայաստանում՝ ավելի մեծ համեմատությամբ, քան կարծվում է առհասարակ:

Նախ՝ այն վիլայեթները, որոնք գտնվում էին ռուս բանակների ներխուժման և գրավման շրջանի մեջ, ինչպես Էրզրումը, Տրապիզոնը, Վանը, Բիթլիսը, այսօր մեծ մասամբ իսկական անապատներ են. մահմեդական ազգաբնակության մեծ մասը զոհ է գնացել պատերազմին, փախել է կամ մահացել համաճարակներից: 1917թ. վերջում Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներում կային ընդամենը մոտ 46000 թուրքեր և 50000 քուրդեր:

Երկրորդ. մեր տեթրիտորիաների այն մասերում, որոնք կազմում էին ռազմաճակատի անմիջական թիկունքը, ինչպես Մվազի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները, մահմեդական տարրը, համաձայն գերման սպաների վկայության, մեծ կորուստներ է կրել պարպումի (էվակուացիա), սովի և խոլերայի ու տիֆի համաճարակների հետևանքով: Օրինակ, Դիարբեքիր քաղաքը, որ պատերազմի սկզբին ուներ 55000 բնակչություն, որից 1915-ի աշնանը 22000 հայեր տեղահանվեցին և անմիջապես փոխարինվեցին Բիթլիսի շրջանից գաղթած 30000 մահմեդականներով, 1917 թվականի մայիս ամսում ուներ ընդամենը 6000 բնակիչ:

Երրորդ. Հայաստանում մնացած մահմեդականների մեծ մասը, հենց որ մեր անկախությունը նվիրագործվի, չի ցանկանալու մնալ մեզ մոտ. նրանք կքաշվեն դեպի սահմանամերձ տերրիտորիաները՝ մի թուրք կառավարության իշխանության տակ ապրելու համար, այս երևույթն է առաջացել ամեն անգամ, որ քրիստոնյա ազգերը ազատված են թուրքական տիրապետությունից:

Եվ չորրորդ. հայ և թուրք կառավարությունների միջև համաձայնության գալուց հետո հնարավոր կլինի կատարել ազգաբնակության կանոնավոր փոխանակություններ: Այդ հարցը կարելի է առաջադրել նույնիսկ Ազգերի Դաշնակցությանն և հավասարակշիռ կերպով իրագործել այդ միջոցը, որովհետև դրանից բարիք կծնվի ամենքի համար էլ, Հայաստանի և Թուրքիայի, ինչպես և համաշխարհային խաղաղության համար:

Կարճ ասած, Հայաստանի սահմաններում հազիվ կեսն է մնում պատերազմից առաջ այնտեղ ապրող մահմեդական բնակչությունից, այսինքն՝ միլիոնից պակաս, բաղկացած հավանորեն կես միլիոն թուրքերից, չերքեզներից և նման տարրերից, 300000 թաթարներից և 200000 քուրդերից:

Այսպես որ կարելի է հետևյալ մոտավոր ցուցատախտակը տալ գաղափար կազմել տալու համար, թե ինչ ազգաբնակություն կունենա Հայաստանն իր գոյության առաջին տարիներում:

Քրիստոնյաներ՝ 3000000, որից հայեր 2500000 հույներ, նեստորականներ, ռուսներ, վրացիներ և եվրոպացիներ 500000: Մահմեդականներ՝ 1000000, որից թուրքեր, չերքեզներ, արաբներ և պարսիկներ 500000, թաթարներ 300000, քուրդեր 200000, այլ կրոններ՝ 300000, ղըզլբաշներ, եզիդիներ, զազաներ և ֆելլահներ 300000:

Ընդամենը՝ 4300000:

* * *

Ասացինք, որ մի ժողովրդի կարևորությունը չափվում է ոչ միայն իր թվով, այլև, մանավանդ, իր տնտեսական ընդունակություններով և իր կուլտուրական մակարդակով:

Ամենահին պատմությունները մատնանշել են արժանիքը հայերի, որոնք իրենց նախաձեռնող ոգով, իրենց հանդգնությամբ և մեծ ծավալով ձեռնարկներով փորձել են, ամենահին դարերից սկսած, զարգացնել վաճառականությունն ու արդյունաբերությունը ամբողջ առաջավոր Ասիայում, և դրանով իսկ, փյունիկեցիների ու հույների հետ, եղել են Արևելքում քաղաքակրթության ռահվիրաները:

Հայերը շարունակել են այդ դերը խաղալ ամբողջ Միջագետքում, ինչպես և նորագույն ժամանակներում: Մենք կտանք միայն մի գերման դիտողի, համագերմանականության առաքյալ Պաուլ Ռորբախի վկայությունը, որը կարող է կողմնապահ համարվել միայն թուրքերի օգտին:

«Այսօրվա Տաճկաստանում, որ սեղմված է համարյա իր ասիական կալվածներում, հայերը շատ ավելի մեծ նշանակություն ունեն, քան ենթադրել է տալիս նրանց թիվը միայն. ոչ մի կասկած չկա, որ նրանք թե՛ իմացական և թե՛ նյութական տեսակետով ամենագործունյա տարրն են արևելյան բոլոր ժողովուրդների միջև: Կարելի է ասել մինչև անգամ, թե նրանք այդ միջավայրում միակ ժողովուրդն են, որ ունի ազգային բնածին հատկություններ: Հայն օժտված է այնպիսի էներգիայով ու տոկունությամբ,

որոնք հակասություն են կազմում այն ամենի հետ, որը սովոր ենք նկատել որպես արևելյան նկարագիր»:

Տաճկական Հայաստանում հայ տարրի տնտեսական գործունեության մասին գաղափար տալու համար՝ ներկայացնում ենք վեց վիլայեթների միջև ամենից քիչ չափով հայկական նկարագիր ունեցող Սըվազի վիլայեթի առևտրական ու արդյունաբերական վիճակագրությունը:

Եվ սակայն, կտեսնենք, որ այդտեղ ամբողջ առևտրական ու արդյունաբերական գործունեությունը գտնվում է համարյա բացառապես հայերի ձեռքին:

Վաճառականություն՝ ներմուծում. 166 մեծաքանակ վաճառականներից 141-ը հայեր են, 13-ը թուրքեր, 12-ը հույներ:

Արտահանություն. 150 վաճառականներից 127-ը հայեր, 23-ը թուրքեր:

37 բանկիրներից կամ կապիտալիստներից 32-ը հայեր են և միայն 5-ը թուրքեր:

9800 խանութպաններից ու արհեստավորներից 6800-ը հայեր են, միայն 2555-ը թուրքեր և 150-ը զանազան ազգությունների անհատներ:

Արդյունաբերություն. 153 գործարաններից 130-ը պատկանում են հայերին. բոլոր գործարանների տեխնիկական պերսոնալը բաղկացած է բացառապես հայերից: Բանվորների թիվն է17700, որոնց մոտ 14000-ը հայ:

Կբավե հիշել, որ պատերազմից առաջ երկու միլիոն հայերի ձեռքին էր մեծագույն մասը՝ ավելի քան 20 միլիոն ազգաբնակություն ունեցող Օսմանյան կայսրության առևտրի: Բայց առևտուրն երբեք չի եղել հայ ժողովրդի գլխավոր պարապմունքը. ազգի ահագին մեծամասնությունը (85-90 տոկոս) միշտ էլ նվիրվել է երկրագործության ու մանր արհեստի՝ թե՛ Թուրքիայում, թե՛ Կովկասում և թե՛ Պարսկաստանում. հայերն ամեն բանից առաջ հողագործներ ու արհեստավորներ են:

«Վանի վիլայեթում, - ասում է Ռորբախը, - հայերի ձեռքին է վաճառականության 98 տոկոսը, երկրագործության 80 տոկոսը: Ոսկերիչները, փորագրիչները, կահկարասի շինողները, դերձակները, կոշկակարները, ճարտարապետները, ատաղձագործները, որմնադիրները հայեր են: Ազատ պրոֆեսիաների հետևողները՝ բժիշկներ, իրավաբաններ, դեղագործներ, նույնպես հայեր են: Նույնն է և մյուս ասպարեզներում:

«Հայ տարրի գործունեությունն երևում է նաև ժողովրդական կրթության և դպրոցական կազմակերպության ասպարեզում: Հայկական դպրոցներն ավելի բազմաթիվ և ավելի լավ են, քան Տաճկաստանում որևէ այլ ազգության դպրոցները. և, ինչ որ առանձնապես պետք է գնահատվի, նրանք շինված են միայն կամավոր նվիրատվություններով՝ ոչ միայն հարուստ հայերի, այլ և համեստ միջոցների տեր անհատների և չքավոր համայնքների: Դեռ 1903թ. Տաճկաստանում հաշվվում էին 818 հայկական դպրոցներ՝ ավելի քան 82000 երկսեռ աշակերտությամբ: Այդ դպրոցներն ենթարկված են Պոլսի պատրիարքարանին: Այդ դպրոցների վրա պիտի ավելացնել և բողոքական ու կաթոլիկ հայերի, ինչպես և մասնավոր անհատների դպրոցները: Միայն Տաճկա-Հայաստանում, այսինքն վեց վիլայեթներում և Կիլիկիայում գտնվում են վերոհիշյալ 818 դպրոցներից 585-ը՝ 52000 աշակերտներով. ընդհակառակը, նույն շրջանում կան միայն 150 տաճկական դպրոցներ՝ մոտ 17000 աշակերտներով»:

Իրերի այդ դրության և հայերի ընդհանուր իմացական գործունեության և, մանավանդ, աշխատանքում ցույց տված հարատևության հե-

տեսանքն է այն, որ տաճկական վարչության մեջ հայերի թիվը համեմատաբար մեծ է: Այդ պաշտոնյաներն այնքան շատ են, և նրանց բաժին ընկնող աշխատանքն այնքան մեծ է, որ առանց հայերի, պետական մեքենան բացարձակապես կանգ կառներ:

Դպրոցների և աշակերտների, ինչպես և ուսուցիչների համեմատականությունն է՛լ ավելի մեծ է Հայաստանի ռուսական մասում: Ռուսական, եվրոպական և ամերիկյան համալսարաններում հայ ուսանողների թիվը 15000-ից անց է:

Հայերն աչքի են ընկել ինչպես Տաճկաստանում, նույնպես Ռուսաստանում ու Պարսկաստանում, իրենց վարչական, դիվանագիտական ու զինվորական հատկություններով: Նրանք բազմաթիվ գեներալներ են տվել ռուսական բանակին, մեծ վարչապետներ՝ Տաճկաստանին, Հունգարիային և բազմաթիվ դիվանագետներ՝ Թուրքիային, Պարսկաստանին ու այլ երկրներին:

Հայերն աչքի են ընկել, մանավանդ, վերջին հիսուն տարվա ընթացքում իմացական գործունեության բոլոր ճյուղերում՝ գրականության, գիտության, գեղարվեստի մեջ և այլն:

Վերջապես ժամանակն է, որ հայերն առիթ ունենան իրենց ընդունակությունները ի սպաս դնելու իրենց երկրին:

Հայ ժողովուրդն էապես դեմոկրատիկ է. նա հնուց ի վեր իր հիմնարկությունները կառավարել է ընտրովի կազմերով: Բացառություն չի կազմում և կրոնական հիերարխիան (նվիրապետությունը), և եկեղեցու գերագույն պետն իսկ ընտրվում է ամբողջ ազգի կողմից:

Մեր հայրենիքը միշտ եղել է երկու աշխարհների, երկու քաղաքակրթությունների՝ արևելյան ու արևմտյան, բաժանման կետը: Ճիշտ այդ պատճառով է, որ Արևելքի ու Արևմուտքի մեծ ընդհարումները կատարվել են նրա լեռներում կամ նրանց շուրջը, և այդ պատճառով է նաև, որ Արևելքի ու Արևմուքի մեծ պետություններն այնքան կարևոր են համարել տիրելու այդ շրջաններին: Նրանք իրարից են խլել այդ շրջանները, որոնք ձեռքից ձեռք են անցել՝ անհամար պատերազմներից հետո. նրանք միշտ ոտնակոխ են եղել, ավերվել, և միշտ էլ բնիկ հայ ժողովուրդն է, որ շինել է ու վերաշինել, կառուցել է և վերակառուցել, և որ չի թույլատրել, որ որևէ մեծ պետություն մշտապես հաստատվի այդտեղ:

Հայաստանի ամբողջ պատմությունը մի անընդհատ, համառ ու անհավասար պայքար է՝ պաշտպանելու համար իր անհատականությունը, մշակույթն ու կրոնը այն հզոր թշնամի պետությունների դեմ, որոնք հարձակվում էին նրա վրա ամեն կողմից: Նա տառապել է ամբողջ դարեր՝ պահպանելու համար իր քրիստոնեական հավատը մահմեդական նվաճողների դեմ: Նա ըստ էապես կասեցրել է ներխուժումները Կենտրոնական Ասիայի բոլոր հորդաների, որոնք հեղեղանման հոսում էին դեպի Եվրոպա և, վերջ ի վերջո, խեղդեցին բյուզանդյան կայսրությունը:

Դարեր շարունակ՝ նա հաջորդաբար հաջողել է կամ կանգուն մնալ ու թագավորություններ կազմել, կամ նվաճողների լծի տակ ընկնելուց հետո վերականգնել ու վերստանալ իր անկախությունը, մերթ իր հայրենիքի այս մասում, մերթ այն մասում, նայած հանգամանքների բերումին: Բայց իր ազգային թագավորների իշխանության տակ, ինչպես և օտարի լծի տակ, այդ լեռների հարազատ տերը, աշխատողը, արտադրողը միշտ էլ եղել է հայը, որ հայրենի հողը ոռոգել է իր արյունով ու քրտինքով, և որի համար

տոկունությունը, հակառակ բոլոր խոչընդոտներին, հիմնել է մի հարազատ քաղաքակրթություն, որ արգասիքն է արևմտյան ու արևելյան երկու քաղաքակրթությունների խառնուրդի:

Ամբողջ Հայկական Բարձրավանդակը, Աղանայից ու Սիսից մինչև Վան ու Երևան, ծածկված է քաղաքների, բերդերի, եկեղեցիների, վանքերի, կամուրջների, հիշատակարանների ավերակներով, որոնք վկա են նրա քաղաքակրթիչ անդաղրում աշխատանքին: Պատմական, փիլիսոփայական ու բանաստեղծական մի մեծարժեք գրականություն, սկսած 4-րդ դարից, մի հարուստ ու ճկուն լեզու և ազգային բնույթ կրող մի եկեղեցի՝ ահա թե ինչ ժառանգություն է թողել մեզ այդ անխոնջ իմացական աշխատանքը:

Հայ ժողովրդի դժբախտությունն այն է, որ տաճկական բռնապետության հետևանքով՝ վերջին քառորդ դարի ընթացքում Արևուտքի քաղաքակիրթ ժողովուրդները նրա մեջ տեսնում են միայն մի հալածված քրիստոնյա ժողովուրդ, որ կարեկցություն է ներշնչում և օգնության է կարոտ: Ոչ թե կարեկցություն, այլ հարգանք է պահանջվում դեպի մի ժողովուրդ, որ սիրահար է աշխատանքի, ազատության, որ այնքա՜ն տառապել է և որ այնպես լավ է դիմադրել: Դժբախտաբար, հայոց պատմությունը շատ քիչ է ծանոթ Արևմուտքում, ուր անգիտանում են, թե հայերն ի՞նչ դեր են կատարել թե՛ իրենց սեփական և թե՛ իրենց ընկճող ժողովուրդների պատմության մեջ: Ավելի քիչ են ծանոթ հայերի գրական ու գեղարվեստական գործերը, որոնք սակայն ցուցահանում են մեր հոգու լավագույն արտահայտությունները, և որոնց հայ ժողովուրդը կարող է հպարտորեն դնել այլ քաղաքակիրթ ազգերի երկերի կողքին:

Այն ժողովուրդը, որ 30 դարերից ի վեր, ավելի առաջ քան Քսենոֆոնը խոսել է նրանց մասին, մինչև այսօր ապրել է այդ բարձրավանդակներում, հայ ժողովուրդն է. այն ժողովուրդը, որ կատարել է պատմության ու աշխարհագրության իրեն հատկացրած դերը, որ իր տարեգրություններում պահել է այն, ինչ արել է և հաստատել է իր իրավունքն այդ տերրիտորիաների վրա, որ յուրաքանչյուր ավերումից հետո շինել է ու վերաշինել, որ խորհել է ու արտադրել՝ դա նույն հայ ժողովուրդն է: Բոլոր մյուս տարրերն եղել են կամ բոլորովին երկրորդական, իրենց թվով ու կարևորությամբ, և կամ պատկանում են կես բարբարոս ցեղերի, որոնք ո՛չ գեղարվեստ ունեն, ո՛չ գրականություն, ո՛չ պատմություն և որոնք իրենց գոյության ընթացքում ոչինչ չեն արել քաղաքակրթության համար: Ինչ վերաբերում է թուրք աշխարհակալներին, որոնք սնվել են մեր արյունով, մեր ուղեղով ու մեր քրտինքով, առանց ինքներն ոչինչ ստեղծելու, ուրիշ բան չեն, եթե ոչ շարունակողներն այն հորդաների, որոնք ասորեստանցիների օրերից ի վեր գրավել են ու ավերել մեր երկրները և որոնք ապա անհետացել են պատմության բեմից՝ Հայկական Բարձրավանդակը թողնելով իր բնիկ տիրոջը՝ հայ ժողովրդին:

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեր հայրենիքի հյուսիսային գավառները, որոնք ընդհանուր առմամբ կազմում են Արաքս գետի ավազանը և որոնց ռուս կառավարությունը 19-րդ դարի ընթացքում կտոր առ կտոր խլեց պարսիկներից ու թուրքերից, նույնպես էական ու անբաժան մասն են կազմում Հայկական Բարձրավանդակի. Արարատը, Գուգարքը, Արցախն ու Սյունիքը, հայտնի հին դա-

ղերից ի վեր, կազմում են Հայաստանի գլխավոր գավառները: Այդտեղ է, որ գտնվում էին մեր մայրաքաղաքներն և մեր այլ նշանավոր քաղաքներից մեծ մասը, ինչպես Արտաշատը, Վաղարշապատը, Երվանդակերտը, Դվինը, Նախիջևանը, Ղարսն ու Անին:

Միջին դարում այդտեղ էր գտնվում մեր Բագրատունյաց թագավորությունը, որի մայրաքաղաք Անին իր դեռ կանգուն ավերակներով լավագույն վկան է հայկական արդյունաբերության, քաղաքակրթության ու արվեստի հասած բարձր աստիճանի: Լռվա իշխանությունը տևեց մինչև 15-րդ դարի սկիզբը: Ղարաբաղում հայկական հնավուրց անկախությունը շարունակվեց մինչև ռուսների գալուստը. ռուսների Կովկաս մտնելու գլխավոր ներշնչողներն եղել են Խամսայի մելիքները (իշխանները). նրանք հույս ունեին, որ քրիստոնյա ռուսների օգնությամբ՝ հայերը կազատվեն մահմեդական լծից և հավատում էին ռուսաց թագավորների խոսքերին, որոնք նրանց խոստանում էին վերականգնել հայկական անկախ իշխանությունը գրավված հողերի վրա: Մինչև այսօր էլ այնտեղ, Էջմիածնում է գտնվում կաթողիկոսի, բոլոր հայերի հոգևոր պետի աթոռը, հիմնված 3-րդ դարում, Հայաստանի քրիստոնեությունն ընդունելուց անմիջապես հետո: Այդ գավառների ազգաբնակության ամենակարևոր տարրը, թվով ու գրված դիրքով, հայն է (տես N 3 ցուցակը):

Քանի որ պատերազմի ու հաշտության նպատակներից մեկն այն է, որ ճնշված ժողովուրդներին իրավունք է տրվում անձամբ վճռելու իրենց սեփական ճակատագիրը, և որ այդ սկզբունքն ընդունված է իրար հաջորդող ռուսական զանազան կառավարությունների կողմից, քանի որ Թուրքիայի տապալումով Հայաստանի մեծագույն մասն ազատված է, այլևս անհնար է Ռուսաստանին թողնել Հայաստանի մի կարևոր մասը՝ այն միակ պատճառով, որ այդ գավառները մի քանի տասնյակ տարիներից ի վեր գտնվում էին ռուսների տիրապետության տակ. մանավանդ որ, 1917 թվականի վերջից ի վեր ամբողջ Կովկասը գործնականապես ու իրապես բաժանված է եղել Ռուսաստանից՝ կազմելով Կովկասյան հանրապետություն: Վերջինս քիչ հետո բաժանվել է երեք մասերի՝ ազգությունների իրավունքի հիման վրա: 1918թ. մայիսին հայոց ազգային ժողովը Ռուսաստանի երկու միլիոն հայության անունով հայտարարեց, որ ռուսական Հայաստանը դառնում է անկախ հանրապետություն՝ մայրաքաղաք ունենալով Երևանը: Այնտեղ կազմվեց մի կանոնավոր կառավարություն, ինչպես և մի բանակ, որ ճգնել է ամեն կերպ կասեցնել թուրքական բանակի առաջխաղացությունը դեպի Ղարս՝ ռուսական բանակների քայքայումից հետո, որոնք ցրվել էին՝ հայերին բոլորովին մենակ թողնելով իրենց դարավոր թշնամիների դեմ:

Իրենց ճակատագրին թողնելով հայերին, չնայած սրանց բոլոր թախանձանքներին, միայն նրանց ժառանգություն թողնելով մի պատերազմ, որը վարելը վեր էր հայերի ուժից, Բրեստ-Լիտովսկի պայմանագրով (և առանց նույնիսկ մեզ հետ խորհրդակցելու) Թուրքիային հանձնելով Կովկասի հայկական Ղարս, Արդահան ու Կաղզվան գավառները, և այդ կերպով պատճառ դառնալով հարյուր հազարավոր հայերի քայքայումին, Ռուսաստանն իր արարքներով իսկ ընդմիշտ խզեց իր և Հայաստանի միջև կապերը: Մնաց որ, միացյալ Լեհաստանի ստեղծումից, ռումանացիների կողմից Բեսարաբիայի գրավումից, Ֆինլանդիայի կատարյալ անկախությունից, Ուկրաինական և այլ պետությունների կազմությունից հետո՝ ռուսա-

կան կայսրության ամբողջականության փաստարկությունը չի կարող մեջբերվել:

Ուստի արդարության բացասումը կլիներ տաճկական Հայաստանի հին տերրիտորիաները բաժանել Ռուսաստանի տերրիտորիաներից՝ ինչ պատրվակով և ինչ ձևերով էլ որ լինի. դա կնշանակեր, այսպես ասենք, կտրատել մի կենդանի մարմին և ստեղծել մի մնայուն պատճառ նոր հալածանքների, նոր ճնշումների և նոր արյունահեղությունների:

Կովկասահայերից շատերը, նրանք կամ նրանց հայրերը, եղել են սուլթանի հպատակներ՝ մինչև 1894-1896 թվականների կոտորածները. այդ ժամանակաշրջանում նրանք փախել են դեպի ռուսական տերրիտորիան: Մյուս կողմից, կովկասահայերն այնքան տուժած չլինելով վերջին կոտորածներից, որքան Թուրքիայի իրենց եղբայրները, կկարողանան Հայաստանին հայթայթել սկզբնական շրջանում պակասելիք տարրերը՝ ստեղծելու համար վարչությունը և ազդակ դառնալու տնտեսական բարգավաճման: Տաճկաստանի եղբայրակիցներից նրանց բաժանելը կլիներ փտելու դատապարտել նրանց ու ավելի ծանրացնել այն պետության գործը, որ պիտի ունենա Հայաստանի վերակառուցմանն օգնելու ժամանակավոր արաքելությունը: Պետություններն ինչպե՞ս կարող են ընդդիմանալ մի իրողության, որ արդեն կատարված է և կատարելապես համաձայն է այն սկզբունքներին, որոնց հիման վրա է կնքելու հաշտության դաշնագիրը:

Ռուսահայերը վերջին դարու ամբողջ կեսին իրենց ֆիզիկական ու բարոյական ուժերի լավագույնը զոհաբերել են Տաճկա-Հայաստանի դատին, որովհետև հասկանում էին, որ իրենց ազատագրման ճանապարհն անցնում էր Տաճկաստանի միջով: Ամբողջ սերունդներ ապրել են Տաճկա-Հայաստանն ազատելու երազով: Եվ ճիշտ այդ պատճառով է, որ ռուսահայերը, պատերազմը հայտարարվելուն պես, խանդավառորեն մտան ռուսական, ֆրանսիական ու անգլիական դրոշների տակ և միանալով տաճկահայերին՝ կազմեցին կամավորական քանակներ, այդ կերպով ապացուցելով, որ օտար պետությունների գծած արհեստական սահմանն անզոր է անջատելու այդ անբաժան ամբողջությունը, որ կապված է ընդհանուր արյունով, ոգով, լեզվով, անցյալով, ներկայով, ապագայով և այնքան շահերով:

Հանուն արդարության, հանուն մեր դարավոր իրավունքի, հանուն Ռուսաստանի և Տաճկաստանի երկու հայ համայնքների անդիմադրելի տենչերի, հանուն այն պատմական անընկճելի անհրաժեշտության, որ վաղ թե ուշ պետք է հաղթանակի, մենք պահանջում ենք նույն ազգի երկու հատվածների բացարձակ ու վերջնական միացումը:

ՀԱՎԵԼՎԱԾ

N1
ՎԵՑ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿԸ 1912 ԹՎԱԿԱՆԻՆ
(Հեքքիարիից, Մղերդից, Դիարբեքիրից, Մալաթիայից հարավ և Մըվազից արևմուտք ու հյուսիս-արևմուտք շրջանները չեն մտնում այս ցուցակի մեջ)

	Էրզրում	Վան	Բիթլիս	Խարբերդ	Դիարբեքիր	Սըվազ	Ընդամենը	Ըստ կրոնի
Մահմեդականները								
Թուրքեր	240000	47000	40000	102000	45000	192000	666000	
Չերքեզներ	7000	-	10000	-	-	45000	62000	
Պարսիկներ	13000	-	-	-	-	-	13000	
Լազեր	10000	-	-	-	-	-	10000	1178000
Գնչուներ	-	3000	-	-	-	-	3000	
Նստակյաց քրդեր	35000	32000	35000	75000	30000	35000	242000	
Թափառական քրդեր	40000	40000	42000	30000	25000	15000	182000	
Քրիստոնյաներ								
Հայեր	215000	185000	180000	168000	105000	165000	1018000	
Նեստորականներ	-	-	-	-	-	-	-	
Հակոբյաններ	-	18000	15000	5000	60000	25000	123000	1183000
Քաղդեացիներ	-	-	-	-	-	-	-	
Հույներ	12000	-	-	-	-	30000	42000	
Զանազան կրոններ								
Զրզըլբաշներ	25000	-	8000	80000	27000	-	140000	
Զազաներ	30000	-	47000	-	-	-	77000	254000
Չարըքլիներ								
Եզիդիներ	3000	25000	5000	-	4000	-	37000	
	630000	350000	382000	450000	296000	507000	Ընդ.գումար	26150000

N 2 վիճակագրական տախտակ
ՅՈԹ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԻ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ

	7 ՎԻԼԱՅԵԹՆԵՐԸ Տիգրիսից հարավ և Եշիլ Ըրմակից արևմուտք շրջաններն առանց հաշվելու	ԿԻԼԻԿԻԱՆ Մարաշի, Խոզանի և Ջեբել Բերեքեթի սանջակները	Գումար	
Հայեր	1198000	205000	1403000	
Հույներ	242000	40000	282000	1850000
Նեստորական, հակոբյան, քաղդեացի և եվրոպացիներ	124000	41000	165000	քրիստոնյաներ
Թուրքեր	865000	78000	943000	
Քրդեր	424000	58000	482000	1635000
Լազեր, չերքեզներ, արաբներ, պարսիկներ	190000	20000	210000	մահմեդականներ

	7 ՎԻԼԱՅԵԹՆԵՐԸ Տիգրիսից հարավ և Եշիլ Ըրմակից արևմուտք շրջաններն առանց հաշվելու	ԿԻԼԻԿԻԱՆ Մարաշի, Խոզանի և Ջեբել Բերեքեթի սանջակները	Գումար	
Ղազալաշներ, եզիդիներ, ֆելլահներ և այլն	255000	48000	303000	309000 զանազան կրոններ
	3298000	490000	3788000	

ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ

Տաճկա-Հայաստան		1403000
Ասիական Թուրքիայի այլ մասերում		440000
Պոլսում և Եվրոպական Թուրքիայում		183000
	Ընդամենը	2026000 հայեր

N 3 ցուցակ
ՌՈՒՍԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1914թ.

	Երևան	Գանձակ	Ղարս	Թիֆլիս		
	Ամբողջ նահանգը	Արևմտ. կեսը	Բացի Արդահանից	Միայն հարավ-արևմտ.	Ընդամենը	
Հայեր	669000	376000	98000	153000	1296000	
Ռուսներ, վրացիներ և այլն.	16000	9000	28000	12000	65000	1361000
Թուրքեր	8000	3000	50000	—	61000	
Թաթարներ	365000	138000	12000	22000	537000	673000
Քրդեր	34000	—	41000	—	75000	
Եզիդիներ	17000	—	21000	—	38000	38000
	1109000	526000	250000	187000	2072000	

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի նահանգում	669871
Գանձակի նահանգում	418859
Ղարսի շրջանում	118217
Թիֆլիսի նահանգում	411747
Բաքվի նահանգում	120057
Սուխումիշրջանում	20743
Սևծովյան նահանգում	18061
Բաթումի շրջանում	15182
Դաղստանի շրջանում	4752
Քութայիսի նահանգում	4643
Զաքաթալայի շրջանում	2530
Գումար	1804662 հայեր

N4 ցուցակ
ԱՄԲՈՂՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 1914թ.

	Տաճկա-Հայաստան	Կովկասյան Հայաստան	Ընդամենը	
Հայեր	1403000	1256000	2699000	
Հույներ, ռուսներ, նեստոր-ականներ և այլն	447000	65000	512000	3211000 Քրիստոնյաներ
Քրդեր	943000	61000	1005000	
Թաթարներ	-	537000	537000	
Քրդեր և թուրքմեններ	482000	75000	556000	2308000 Մահմեդա-կաններ
Լազեր, չերքեզներ, արաբներ և այլն	210000	-	210000	
Զրզըլբաշներ, զազաներ, եզիդիներ և այլն	303000	38000	341000	341000 Զանազան դավանություն
	3788000	2072000	5860000	

N 4 ցուցակ
ԱՄԲՈՂՋ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 1914թ.

Հայաստանում՝		
Տաճկահայաստան	14030000	2699000
Կովկասյան Հայաստան	1296000	
Հայաստանին սահմանակից շրջաններում՝		
Ասիական Թուրքիայի այլ շրջաններ	440000	1088000
Կովկասի այլ շրջաններ	508000	
Պարսկաստանում	140000	
Ավելի հեռու շրջաններ՝		
Պոլսում և Եվրոպական Թուրքիայում,	183000	683000
Ռուսաստանում և Հյուսիս. Կովկասում	250000	
Եվրոպայում, Եգիպտոսում և Հնդկաստանում	120000	
Ամերիկայում	130000	
Ընդհանուր գումար		4470000

N 5 բաղդատական ցուցակ
ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՈՒ ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆՐԱՆՑ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Բուլղարիայի ազգանկանությունը 1816թ., նախքան տաճկական լծից ազատվելը		Հայկական վեց նահանգների բնակչությունը 1914 թվականին	
Բուլղարներ	1130000	Հայեր	1018000
Հույներ	12000	Հույներ	42000
Հայեր	25000	Նեստորականներ	23000
Վլահներ և այլն	65000	Զրզրլրաշներ	140000
Քրիստոնյաների ընդհ. թիվ	1209500	Զազաներ և այլք	77000
Գնչուներ	12000	Եզիդիներ	37000
Հրեաներ	12000	Գումար	1437000
Ընդհանուր գումար	1233500	Թուրքեր	666000
Թուրքեր	774000	Քրդեր	424000
Հնուց գաղթ. թաթարներ	110000	Այլ մահմեդականներ	88000
Չերքեզներ	200000	Ընդամենը	1178000
Մահմեդականների գումար	1119000		
Ընդհանուր գումար	2352500	Ընդհանուր գումար	2615000